

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԸՄՔՈՆՈՒՄԸ Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ԱՐԺԷՔԱՔԱՆԱԿԱՆ ՀԱՅԵԱՅՔՆԵՐՈՒՄ

Յօդուածը նուիրուած է հայ փիլիսոփայ, մտաւորական Շ. Պէրպէրեանի իմացաբանական հայեացքներին, մասնաւորապէս՝ ճշմարտութեան հիմնախնդրին՝ արժէքաբանութեան համատեքստում: Յօդուածում քննարկուում են ճանաչողութեան ձեւերին, աշխարհընկալման առանձնայատկութիւններին, ճշմարտութեան էութեանը, բնոյթին, տեսակներին առնչուող հարցեր եւ իմացաբանական մի շարք այլ խնդիրներ: Վերլուծութեան են ենթարկուում Պէրպէրեանի արժէքաբանական, իմացաբանական ընկալումները: Փորձ է արւում բացայայտել մարդու եւ ճշմարտի փոխարարելութիւնը, ճշմարտական արժէքի գնահատման գործընթացը: Համեմատական վերլուծութեան միջոցով քննարկուում են ճշմարտութեան հիմնախնդրին առնչուող այնպիսի հարցեր, ինչպիսիք են ճշմարտութեան գոյութիւնը, դրան հասնելու հնարաւորութիւնը, ճշմարտութեանը ձգտելու պատճառները եւ կարելորութիւնը:

Լինելով XX դարի առաջին կէսի արեւմտահայ իմաստասիրական մտքի ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկը՝ Շ. Պէրպէրեանն անշնչելի հետք է թողել գիտութեան եւ փիլիսոփայութեան պատմութեան մէջ՝ իր անգնահատելի ներդրումն ունենալով գեղագիտական, արժէքաբանական, հոգեբանական, բնագիտական, մանկավարժական եւ այլ ոլորտներում: Վաղ մանկութիւնից Պէրպէրեանը շրջապատուած է եղել հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան մթնոլորտով՝ ժառանգելով եւ կատարելագործելով հօր՝ Ռեթէոս Պէրպէրեանի մանկավարժական, գրական, փիլիսոփայական, հրապարակախօսական ձիրքն ու տաղանդը: Բնատուր լուսաւորութիւնն ու ինքնակրթման ձգտումները մտաւորականին ուղղորդում են ուսումը շարունակել Փարիզում՝ աշակերտելու այնպիսի մեծութիւնների, ինչպիսիք էին՝ փիլիսոփայ, գեղագէտ ու հոգեբան Անրի Պերկսոնը, սոցիոլոգ Էմիլ Տիւրքհէյմը, հոգեբաններ Ժանէն, Տիւման եւ ուրիշներ:

Նուիրուած լինելով Շ. Պէրպէրեանի թողած գիտական ու փիլիսոփայական բազմաթիւ ժառանգութիւնները մէկի՝ իմացաբանական, մասնաւորապէս՝ ճշմարտական հիմնախնդրների վերլուծութեանը՝ սոյն յօդուածը նպատակ ունի նախ եւ առաջ ըստ արժանւոյն ուսումնասիրել, քննարկել ու բացայայտել մեծն մտածողի ստեղծագործութիւնն ու գործունէութիւնը, ժողովրդականացնել, հանրայնացնել, ծանօթացնել ու յիշեցնել հայ հանրութեանը իր մտաւորական հանճարների մասին: Յօդուածի նպատակն է նաեւ արեւելահայերէնով ներկայացնել նրա ստեղծագործական ժառանգութիւնը, որը Պէրպէրեանի աշակերտները պահպանել են բացառապէս արեւմտահայերէնով:

Յօդուածի բովանդակային նպատակներն են՝ բացայայտել Պէրպէրեանի իմացաբանական հայեացքները, ճշմարտութեան սահմանումը, բովանդակութիւնը, էութիւնը, ճշմարտութեան գնահատումը արժէքաբանական տեսանկիւնից:

Յօդուածի հիմնախնդիրներն են՝ ճշմարտութեան բովանդակութեան բացայայտումը եւ արժեւորման հիմնաւորումը Պէրպէրեանի արժէքաբանական ուսմունքի համատեքստում: Քննարկուող հարցերը մտորումների առարկայ են եղել բոլոր ժամանակներում, սակայն մինչ օրս շարունակում են պահպանել իրենց արդիականութիւնը, քանի որ չեն ստացել մէկ միասնական պատասխան կամ մօտեցում: Ներկայացուող հիմնախնդիրը ներկայացրել ենք բովանդակային եւ համեմատական վերլուծութիւնների միջոցով՝ անդրադառնալով այնպիսի հեղինակների, ինչպիսիք են՝ Արիստոտելը, Հեգելը, Դեկարտը:

Տրամաբանական ճշմարտութիւն

Շ. Պէրպէրեանի արժէքաբանական աստիճանակարգման մէջ կարեւոր դիրք ունի ճշմարտական արժէքը: Լինելով բազմակողմանի զարգացած եւ տարաբնոյթ հետաքրքրութիւններ ունեցող մտաւորական՝ Շ. Պէրպէրեանը չի սահմանափակել իր փնտռողներն ու մտային պեղումները ճշմարտութիւնը գտնելու ճանապարհին՝ միեւնոյն ժամանակ՝ չհակադրուելով իր կրօնական համոզմունքներին եւ չդաւաճանելով քրիստոնէական պատկերացումներին: Հեղինակը ճշմարտութիւնը դիտարկում է իբրեւ ինքնին արժէք, որը համապատասխանում է մարդու էութեանը եւ լրացնում է այն: Ճշմարտութեան հակառակը հանդէս է գալիս իբրեւ տկարութիւն, թերութիւն, «լայն իմաստով՝ տեսակ մը չարիք որ անճշդութիւնն է եւ որոշ պարագայի մէջ՝ սխալը»¹: Մարդը ձգտում է դէպի ճշմարտութիւնը, քանի որ այն իր իսկ էութեան անբաժան մասն է:

Ճշմարտութեան հարցի շուրջ փիլիսոփայական մի շարք տեսութիւններ են ձեւաւորուել (համապատասխանութեան, աւտորիտար, կոհերենտութեան, ակնյայտութեան, պրագմատիկական եւ այլն), որոնցից իւրաքանչիւրն իր ուրոյն մօտեցումն է ցուցաբերել ճշմարտութեան սահմանման, բնոյթի, գոյութեան եւ այլ հարցերի վերաբերեալ: Այստեղ Պէրպէրեանի հայեացքները հիմնականում ազդեցութիւն են կրել դասական փիլիսոփայութիւնից, մասնաւորապէս՝ ճշմարտութեան համապատասխանութեան (կորեսպոնդենցիայի) տեսութիւնից:

Նախքան ճշմարտութեան գնահատումը արժէքաբանական տեսանկիւնից՝ պէտք է հասկանանք, թէ ինչ է ճշմարտութիւնը, ինչպիսին է դրա էութիւնը: Հեղինակն իր վերլուծութիւնը սկսում է դասական փիլիսոփայական մօտեցումից, համաձայն որի՝ ճշմարտութիւնը սահմանում է որպէս մտածողութեան եւ իրականութեան համապատասխանութիւն: Այս մօտեցումն արմատներով հասնում է հին յունական փիլիսոփայութիւն: Ճշմարտութեան համապատասխանութեան տեսութեան ամենավառ ներկայացուցիչն Արիստոտելն է, ով այս տեսակէտն առաջին անգամ ներկայացրել է իր «Մետաֆիզիկա» աշխատութիւնում: Ըստ նրա՝ «Ասել, որ մի բան կայ, երբ այն իրականում չկայ, կամ ասել, որ մի բան չկայ, երբ այն իրականում կայ, նշանակում է՝ սխալ ասել, այնինչ, ասել, որ կայ այն, ինչ իրականում կայ, կամ ասել, որ չկայ այն, ինչ իրականում չկայ, նշանակում է՝ ասել ճշմարտութիւնը»²: Այլ խօսքով՝ դատողութիւնը ճշմարիտ է այն դէպքում, երբ համապատասխանում է օբյեկտիվ իրականութեանը: Հետեւելով համապատասխանութեան տեսութեանը՝ Պէրպէրեանը եւս ճշմարտութեանը հասնելու միջոցը տեսնում է միտքը օբյեկտիվ իրականութեանը հնարաւորինս ճշգրիտ համապատասխանեցնելու մէջ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ հեղինակն ընդունում է օբյեկ-

¹ Շ. Պէրպէրեան, Արժէքաբանութիւն կամ արժէքներու իմաստասիրութիւն, Ամբիլիաս, 1976, էջ 85:

² Aristotle, Metaphysics, New York, 1998, էջ 107.

տիվ իրականութեան եւ մէկ միասնական ճշմարտութեան գոյութիւնը՝ մարդու խնդիրը համարելով այդ միակ ճշմարտութիւնը գտնելը, տեսնելը, ճանաչելը: Պէրպէրեանը ճշմարտութիւնը համարում է յարաբերութիւն մարդու մտքի եւ աշխարհի միջեւ՝ ըստ այդմ առանձնացնելով երկու տեսակ ճշմարտութիւն՝ կախուած նրանից, թէ որը որին է համապատասխանեցուած: Այն դէպքում, երբ իմացականութիւնը համապատասխանեցուած է իրականութեանը՝ ճշմարտութիւնը տրամաբանական է, երբ ընդհակառակը՝ իրականութիւնն է համապատասխանում իմանալիին՝ ճշմարտութիւնն էաբանական է: Բայց այս երկուսի յարաբերութիւնը երբեմն դժուար է հասկանալ, քանի որ ճշմարտութիւնը հիմնականում կիրառում է միայնակ՝ առանց կոնկրետացնելու, թէ ինչպիսին է այն, առօրեայ խօսքում ասում ենք իմանալ ճշմարտութիւնը: Սրա հետեւանքով կարող է թուալ, թէ ճշմարտութիւնը ինչ-որ առարկայ է, որը պէտք է իմանալ, գիտակցել, սակայն տրամաբանական ճշմարտութեան պարագայում հէնց դրա գիտակցումն է, որ ճշմարտութիւն է կոչում: Հետեւաբար՝ ճշմարտութիւնը ոչ թէ առարկայ է, որը պէտք է իմանալ, այլ յարաբերութիւն առարկայի եւ մտքի միջեւ: Պէրպէրեանը փորձում է գտնել հարցի պատասխանը, թէ որտեղ է ի վերջոյ արժէքը՝ կատարելապէս մտքում, թէ՛ իրերի մէջ, մտքի համապատասխանութեան մէջ իրականութեանը, թէ՛ իրերում, որոնք արժէք են ստանում՝ իրենց «թափանցիկութեամբ»: Ճշմարտական մէկ, թէ՛ երկու արժէք որոշել, երկու արժէքներն առանձին-առանձին գիտարկել, այնուհետեւ համադրել: Խորը վերլուծութեան ենթարկելով երկու տեսակ ճշմարտութիւնները՝ հեղինակը փորձում է հասնել դրանք իրար կապող միակ արժէքին: «Այս երկու ուղղութիւնները իրարու դէմ յառաջացնելով իրենց զիրար կտրելու մակարդակին վրայ պիտի համադրենք զիրենք եւ հոն պիտի ճանչնանք բուն ճշմարտական արժէքը»³:

Տրամաբանական ճշմարտութեան էութեան բացայայտման փորձերում Պէրպէրեանը հանդէս է գալիս ռացիոնալիզմի դիրքերից՝ ճշմարտութեան ճանաչումը կապելով մարդու բանականութեան, ներքին կարողութեան հետ: Ճշմարտութեան բացայայտման ռացիոնալիստական մէկ այլ մօտեցում ունի տուեալ ուղղութեան ամենավառ ներկայացուցիչներից մէկը՝ Հ. Վ. Լայպնիցը, ով ներմուծում է «բարոյական ճշմարտութիւն» հասկացութիւնը: Այստեղ ճշմարտութիւնը ներկայացւում է իբրեւ միջանձնային յարաբերութիւնների կատարելութիւն եւ ունի բացարձակ գիտելիքի բնոյթ⁴: «Բարոյական ճշմարտութիւնը» ձեւափոխւում է Կանտի տեսութեան շրջանակներում՝ դառնալով «կատեգորիկ իմպերատիվ»՝ այսպիսով ճշմարտութիւնն ամրապնդելով իտէալական, նորմատիվ գիտելիքի ոլորտում: Իտէալականի եւ իրականութեան հակասութեան սրումը ցոյց է տալիս համընդհանուր բարոյական ճշմարտութեան գոյութիւնը, որի բարոյական սկզբունքը գտնւում է մարդու ներսում, ճանաչողութեան տրանսցենդենտալ ձեւերի նման⁵:

Տրամաբանական ճշմարտութիւնը հասկանալու համար՝ Պէրպէրեանն առաջարկում է անդրադառնալ իմացաբանական որոշ հարցերի, քանի որ տրամաբանական ճշմարտութեանը հասնելու ճանապարհն արտաքին աշխարհի ընկալման գործընթացն է: Ինչպէ՞ս է մարդն ընկալում, ճանաչում աշխարհը, ինչպէ՞ս է գտնում ճշմարտութիւնը եւ ինչպէ՞ս է երբեմն մոլորւում: Պէրպէրեանն առանձնացնում է տրամաբանական ճշմարտութեանը հասնելու երեք աստիճան: Ամէն անգամ, երբ մեզանից դուրս կամ մեր

³ Ը. Պէրպէրեան, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, էջ 87:

⁴ Г. Лейбниц, Новые опыты о человеческом разумении, сочинения в 4-х т. Т. 2, М.: Мысль, 1983, էջ 405.

⁵ И. Кант, О мнимом праве лгать из человеколюбия // Трактаты и письма. - М.: Наука, 1980, էջ 293.

մէջ գտնուող իրականութիւնը գիտակցում ենք իբրեւ մեր առաջ ներկայ, առկայ իրականութիւն, արդէն իսկ բախուած ենք դրա ճանաչման խնդրին, հետեւաբար՝ այստեղ կայ նաեւ տրամաբանական ճշմարտութեան որոշակի արժէք: Աշխարհճանաչման գործընթացի առաջին փուլը զգայաբանական ընկալումն է: «Այն երեւոյթները որոնք կը կայանան թանձրականի եւ մասնաւորի ծանօթութեան մէջ, որոնք կ'ըսուին զգայական կամ զգայարանական ծանօթութեան երեւոյթներ»⁶: Զգայարանները ապահովում են մարդու եւ աշխարհի կապը՝ աչքերը տեսնում են լոյսը, ականջները լսում են ձայները եւ այլն, եւ զգայարանական այսպիսի ծանօթութիւնն ինքնին յատուկ արժէք ունի, օրինակ՝ երբ աչքերը լաւ են տեսնում, կամ ձայները յստակ են լսում: Այս արժէքը յատկապէս գնահատում են նրանք, ովքեր կորցրել են այդ զգայարանների սրութիւնը՝ նախկինում տեսնող կոյրերը, զգայարանների սրութիւնը կորցրած ծերունիները: Երբ մարդիկ երկար ժամանակ մնում են մթութեան մէջ, մի տեսակ կարօտում են լոյսը, տեսնելու ծարաւ են ունենում: Հետեւաբար՝ զգայարանները ոչ միայն տեղեկութիւններ են փոխանցում, այլեւ հաճոյք են պատճառում, մարդը ոչ միայն ճանաչում է աշխարհը, այլեւ վայելում է իր զգացածը, այդ է պատճառը, որ կան այնպիսի արտայայտութիւններ, ինչպիսիք են. «հաճելի գոյներ», «հաճելի ձայներ» եւ այլն: Գոյները հաճելի են, որովհետեւ դրանք ստանալու համար աչքի տարբեր մասերը գործում են միասին, մի գոյնը չի վանում միւսին՝ դրանք համադրւում են եւ դառնում են ներդաշնակ: «Զգայութիւնը կը գունաւորուի զգայնութեամբ մը: Հակառակ պարագային ալ տհաճութեամբ մը կը գունաւորուի: Հետեւաբար այդ զգայարանական ծանօթութիւնը ինքնին արդէն կրնայ տեսակ մը արժէք ներկայացնել»⁷: Այստեղ Պէրպէրեանն իրեն բնորոշ նրբութեամբ ներկայացնում է աշխարհը զգալու մարդու իւրայատուկ կարողութիւնը, որը միջնորդաւորուած է ֆիզիքական զգայարաններով, սակայն դրանցից անդին է, հոգեւոր է: Ժշմարտութիւնը բացւում է հոգու մէջ եւ հոգու միջոցով: Այստեղ Պէրպէրեանի ըմբռնումները համեմատելի են ճանաչողութեան պլատոնեան մօտեցման հետ, ըստ որի «...հոգին շրջւում է դէպի լուսաւոր ճշմարտութիւնն ու գոյութիւնը, նա ընկալում եւ ճանաչում է դրանք»⁸:

Աշխարհճանաչման յաջորդ աստիճանին հասնում ենք, երբ մեր զգայարաններով ոչ թէ պարզապէս զգայութիւններ ենք ունենում, այլ գտնում ենք այդ զգայութիւնների կապերն ու տարբերութիւնները եւ արտըմբռնումներ ենք ունենում, այսինքն՝ ըմբռնում, տեսնում ենք արտաքին աշխարհի առարկաները: Այստեղ հեղինակն անդրադառնում է մարդու ընկալման մի հետաքրքիր առանձնատկութեան, ըստ որի՝ առարկաները, որոնք իրենց տարրերում կանոնաւորութիւն ունեն, աւելի դիւրին կերպով են ընկալւում մարդու կողմից, քան առարկաները, որոնք զուրկ են այդ կանոնաւորութիւնից: Սա նշանակում է, որ համաշափութիւնը, նմանութիւնների կրկնութիւնը առաւել գրաւիչ են: Օրինակ՝ երաժշտութիւնը հաճելի է ականջին, քանի որ հնչիւնների համաշափութիւն, ներդաշնակութիւն ունի, իսկ անկանոն ձայները, աղմուկը տհաճութիւն են պատճառում: «Կանոնաւորութիւնը քաջողութիւն մը ունի: Ուրեմն արտըմբռնումի պարագային ալ արժէք մը կը տեսնենք: Յաջող արտըմբռնում մը իր կարգին հաճոյք մը կու տայ»⁹:

⁶ Ը. Պէրպէրեան, Հոգեբանութիւն, Անթիլիաս, 1992, էջ 184:

⁷ Ը. Պէրպէրեան, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, էջ 88:

⁸ Պլատոն, Պետութիւն, երկեր չորս հատորով, հ. 4, Երեւան, 2017, էջ 260:

⁹ Ը. Պէրպէրեան, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, էջ 89:

Բայց այս երկուսից զատ գոյություն ունի բուն իմացական ծանոթությունը, որտեղ մենք կարողանում ենք փաստել կոնկրետ իրի, առարկայի գոյությունը՝ ընդհանուր գաղափարից՝ յանգելով կոնկրետ առարկայի ճանաչմանը: «Այն երեւոյթները որոնք կը կայանան վերացականի եւ ընդհանուրի ծանոթութեան մէջ, որոնք նեղ իմաստով կ'ըսուին բուն իմացական ծանոթութեան երեւոյթներ»¹⁰: Օրինակ՝ ծանօթ ենք աթոռի գաղափարին, գիտենք դրա մօտաւոր, ընդհանուր կառուցուածքը, նիւթը, նշանակությունը: Երբ տեսնում ենք որեւէ աթոռ մեր առաջ, կարողանում ենք ճանաչել այն որպէս այդպիսին, քանի որ մեր մտքում եղած աթոռի գաղափարը համընկնում է մեր առջեւ գտնուող առարկայի հետ: Մտածելը հէնց այս՝ երրորդ աստիճանի դրսեւորումն է, քանի որ այդտեղ է, որ մենք ոչ միայն ճանաչում ենք մեզ շրջապատող կամ մեր ներսում գտնուող երեւոյթներն ու առարկաները, այլեւ տեսնում ենք դրանց միջեւ կապերը, յարաբերությունները:

Շարունակելով մտածելու գործընթացի վերլուծությունը՝ Պէրպլերեանն առաջ է բերում յայտնիութեան (ակնյայտութեան) գործօնը: Գաղափարներն իբրեւ առարկաներ զուտ մտային են, միտքն է տալիս դրանց այդ առարկայությունը: Գաղափարները դրուում են մտածման առջեւ եւ իրենց յարաբերություններով «յայտնի կերպով» ներկայանում են մտքին¹¹: Տրամաբանական ճշմարտությունն այդ ակնյայտութեան անունն է: Մտածուող առարկաները շատ անգամ իմաստներ ու գաղափարներ են: Օրինակ գիրը, որը նշանային համակարգ է, այդ նշաններից զատ առանձին իմաստ է պարունակում, նշանների միջոցով փոխանցւում է իմաստը: Միտքը, որի առաջ դրւում է այդ գիրը, անշուշտ, ինքն է գտնում իմաստը, սակայն չի կարող իր ուզած ձեւով իմաստաւորել այն, քանի որ հեղինակն արդէն «պարտադրում» է կանխամտածուած իմաստը: Այստեղ, ի հարկէ, կարող ենք խորհել մարդու անհատական ընկալումների, կեանքի տարբեր ոլորտներում, յատկապէս՝ արուեստում սուբյեկտիվ մօտեցումների եւ իմաստաւորումների շուրջ: Պայմանաւորուած ճաշակով, ինտելեկտուալ կարողություններով, այս կամ այն արժէքի ընկալման հնարաւորություններով, իմաստները տեսնելու առանձնայատկություններով՝ մարդիկ տարբերւում են մէկը միւսից: Օրինակ՝ միեւնոյն արուեստի գործը երկու մարդկանց կողմից կարող է տարբեր կերպ ընկալուել, տարբեր իմաստներ ստանալ, եւ յատկանշականն այն է, որ այդ իմաստներից ոչ մէկը կարող է եւ չհամընկնել գործը ստեղծողի նախապէս մտածուած եւ ցուցադրած իմաստի հետ: Օրինակ՝ կան դէպքեր, երբ գրական ստեղծագործությունը վերլուծւում է տարբեր փորձագէտների կողմից, ներկայացւում է տարբեր իմաստների տեսանկիւններից, որոնք յաճախ հակասում են մէկը միւսին: Իսկ երբ հեղինակն է պատմում իր ստեղծածի մոտիվը, իմաստը, նախապատմությունը, երբեմն պարզւում է, որ մնացած բոլոր մեկնությունները ճշմարիտ չեն: Այսպիսի դէպքեր, բնականաբար, հնարաւոր են կեանքի մնացած ոլորտներում եւս, սակայն Պէրպլերեանն այստեղ ներկայացնում է այն իրավիճակը, որը չի ուղեկցւում այսպիսի վիճելի անճշտություններով: Չէ՞ որ, ի վերջոյ, կանխամտածուած իմաստը տուեալ կոնկրետ իրավիճակում միակ ճշմարիտն է, մնացած վերլուծությունները պարզապէս գուշակություններ են, իրականությունը գտնելու փորձեր են, որոնք կարող են յաջողուել կամ չյաջողուել:

Շարունակելով ընկալման գործընթացում ամենահիմնային առանձնայատկությունն՝ իմաստաւորելու կարողութեան վերլուծությունը՝ Պէրպլերեանը՝ դեկարտեան հա-

¹⁰ Ե. Պէրպլերեան, Հոգեբանութիւն, Անթիլիաս, 1992, էջ 184:

¹¹ Տե՛ս Ե. Պէրպլերեան, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, էջ 90:

յեացքներից ներշնչուած՝ այն անուանում է «գիտակցութեան լոյս»։ «...Միտք ըստւածը տեսակ մը լոյս կ'արձակէ իրմէ, գիտակցութեան լոյսը, որ ինքնին գոյութիւն մը չէ այլ բան մըն է որ իր դիմացը կը յայտնաբերէ եւ միտքին ներկայ կը դարձնէ առարկաներ»¹²։ Ըստ Դեկարտի յայտնի հայեցակարգի՝ գոյութիւն ունի Աստծոյ կողմից տրուած բնական լոյս, որն օգնում է բանականութեանը ձերբազատուել մարմնի պարտադրուած սահմանափակումներից, մտածել պարզ ու յստակ։ Մտքի արձակած լոյսը միշտ առարկայ ունի, այդ պատճառով ենք ասում, որ մտածումը միշտ ինչ-որ բանի մտածում է։ Այդ առարկան ուղղակի ինքը միտքը չէ, միտքն այն է, ինչն իր լոյսով ընդգրկում է առարկան։ Գաղափարներն իրենց յարաբերութիւններով իմացական ակնյայտութեան առարկաներ են, ինչպէս արտաքին իրերը առարկայ են զգայական ակնյայտութեան։ Տրամաբանական ճշմարտութիւնը մտքի յարաբերութիւնն է առարկայի հետ, որտեղ այդ առարկան իր յարաբերութիւններով ակնյայտ է մտքի համար։ Ակնյայտութիւնը ճշմարտութեան միակ չափանիշն է։

Շարունակելով ճշմարտական արժէքի փնտռումը՝ Պէրպէրեանը փորձում է գտնել այն հարցի պատասխանը, թէ ինչու են մարդիկ սխալուում։ Եթէ մտքին բնորոշ է առարկաներն իր դիմացը դնել եւ իրենց իսկութեան մէջ տեսնել դրանք, ապա ինչպէ՞ս է ստացւում, որ երբեմն միտքը հաւաստում է բաներ, որոնք իրական չեն կամ չի կարողանում ստոյգ կերպով հաւաստել, այլ խօսքով՝ սխալուում է։ Նախքան այս հարցին պատասխանելը՝ հեղինակը յստակեցնում է սխալուելու եւ տգիտութեան՝ չիմանալու տարբերութիւնները՝ նշելով, որ այս երկու հասկացութիւնները նոյնական չեն, չիմանալը սխալուել չէ։ Սխալը ենթադրում է ինչ-որ բանի հաւաստում որպէս ճշմարիտ, այն պարագայում, երբ այն ճշմարիտ չէ։ Բայց սխալի մէջ այդ հաւաստումն անկեղծ է, հաւաստողն ինքն էլ համոզուած է, որ ճիշդ է ասում։ Այն պարագայում, երբ հաւաստումը կեղծ է, դա ոչ թէ սխալ է, այլ՝ սուտ։ Սուտը ենթադրում է, որ հաւաստողը գիտի ճիշդը, բայց դիտմամբ, միտումնաւոր կերպով թաքցնում է՝ սխալը ներկայացնելով որպէս ճշմարտութիւն։ Ամէն սուտ պարունակում է թէ՛ ճշմարտութիւն, թէ՛ սխալ, քանի որ ստախօսը կարող է ստել, միայն եթէ գիտի ճշմարտութիւնը եւ դրա փոխարէն հաւաստում է սխալը։ Եթէ ստախօսը գիտի ճշմարտութիւնը, սակայն հակառակն է պնդում, ապա սխալի պարագայում՝ սխալուողն անտեղեակ է ճշմարտութիւնից։ Սխալի հասկացութիւնն այստեղ նոյնական է մոլորութեան հետ։ Ճշմարտութեան եւ սխալի յարաբերութեան վերաբերեալ յատկանշական են Հեգելի հայեացքները, որոնց համաձայն՝ ճշմարտութեան ճանաչումը պատմական գործընթաց է, մարդկութիւնն անդադար ձգտում է դէպի բացարձակ ճշմարտութիւն։ Այդ ճանապարհն անցնում է սխալների եւ մոլորութիւնների յաղթահարման միջոցով¹³։

Տեղին է նշել նաեւ կեղծիքի հասկացութիւնը, որն ըստ Հեգելի սահմանման՝ մարդու ունեցած գիտելիքի եւ ճանաչողող առարկայի անհաւասարութիւնն է¹⁴։ Զիմացութիւնը, որն առաջին հայեացքից հեռացնում է մարդուն ճշմարտութիւնից, իրականում դրան հասնելու ճանապարհի անբաժան մասն է։ Այս առիթով Հեգելն ասում է. «Կարելի է ասել, որ ճանաչողութիւնը սկսւում է անյայտութիւնից, քանի որ այն, ինչն արդէն մեզ ծանօթ է, ճանաչման կարիք այլեւս չունի։ ...Բայց ճշմարիտ է նաեւ հակառակը՝ ճանա-

¹² Նոյն տեղում։

¹³ Տե՛ս Գ. Փ. Դեգել, Сочинения. Т. 1: Энциклопедия философских наук. Ч. 1: Логика. М., 1929, էջ 320։

¹⁴ Տե՛ս նոյն տեղում։

չողութեան գործընթացը ձգուում է յայտնիից դէպի անյայտը»¹⁵:

Հստ Պէրպէրեանի՝ սխալը մտքի թերութեան արդիւնք է, եւ այդ թերութիւնն իր պատճառներն ունի, որոնք լինում են երկու կարգի՝ առարկայական (Objective) եւ ենթակայական (Subjective)¹⁶: Առարկայական պատճառները մտքի առարկայի մէջ են: Մտածման առարկան կարող է բարդ եւ անորոշ լինել: Միտքը երբեմն չի կարողանում յստակ դատել: Ինչպէս զգայարանները կարող են խաբուսիկ լինել, նոյն կերպ եւ միտքը, քանի որ դատողականութիւնը խճճուում է բարդութիւններում: Այն առարկաները, որոնք մտքի կողմից յստակ սահմանուած են, որպէս կանոն, չեն յանգեցնում սխալի, օրինակ՝ ակնյայտ ճշմարտութիւնները, որոշ գիտութիւններ, մաթեմատիկական անվիճելի կանոնները եւ այլն: Բայց կան առարկաներ, որոնք աւելի բարդ եւ շփոթեցնող կերպով են ներկայանում մտքին, օրինակ՝ մարդկային յարաբերութիւնները, ներանձնային խնդիրները, բարոյական երկընտրանքները, որոնց պարագայում միտքը երբեմն տկար է լինում, չի կարողանում ամբողջութեամբ ընդգրկել իր առջեւ եկած բարդութիւնը, արդիւնքում սխալ է դատում:

Սխալուելու միւս պատճառը ենթակայականն է, որը ոչ թէ բուն միտքն է, այլ՝ զգայութիւնն է, զգացումներն են: «...Զգացումները երբ միտքը կը վարեն ան իր զուտ իմացականութիւնը կը կորսնցնէ եւ զգացումներու գոլորշիին մէջէն կ'արձակէ իրականութեան վրայ իր ճառագայթները, որոնք այդ գոլորշիին մէջ կը շեղին եւ առարկան տարբեր կերպով կը ներկայանայ միտքին»¹⁷: Սխալուելու պատճառը մարդու ներսում է փնտռում նաեւ Դեկարտը՝ նշելով, որ սխալի հիմքում ոչ թէ օբյեկտիվ իրականութեան առարկաներն են, այլ՝ մարդու ինտելեկտը եւ կամքը: «...Երբ ես զննում եմ ինքս ինձ եւ ուսումնասիրում եմ իմ սխալների բնոյթը (որոնք իմ թերի լինելու ապացոյցն են), նկատում եմ, որ սխալներս կախուած են երկու պատճառներից՝ իմ ճանաչողական եւ ընտրողական կարողութիւններից, այլ կերպ ասած՝ ընտրութեան ազատութիւնից, այսինքն՝ միաժամանակ իմ ինտելեկտից եւ կամքից»¹⁸:

Այսպիսով՝ գտնելով սխալուելու պատճառները, հիմքերը՝ Պէրպէրեանը տալիս է նաեւ չսխալուելու բանալին. «Չսխալուելու պայմանը առանց կիրքի, այսինքն առանց մեր զգայնութեան միջամտութեան դատելուն մէջ է»¹⁹: Դրա համար հարկաւոր է անընդհատ ինքնաքննադատութեամբ, ինքնադատաստանով, ինքնավերլուծութեամբ ձգտել կատարեալ ինքնաճանաչման: Առանց կիրք դատելու ձեւը պահանջում է ինքնաքննութիւն, ինքնաճանաչում եւ սեփական մղումների սահմանափակում զուտ ճշմարտական արժէքով: Այսպէս գործելու դէպքում սխալուելու ենթակայական պատճառները զգալիօրէն կը կրճատուեն, կը մնան առարկայականները, որոնց վերացման հնարաւորութիւնը հեղինակը տեսնում է գիտական մեթոտների կատարելագործմամբ եւ կիրառմամբ՝ բարդը՝ պարզի, անորոշը՝ յստակի վերածելու մէջ:

Տեսանք, որ տրամաբանական ճշմարտութեան պարագայում ճշմարիտ ածականը տալիս ենք մտքի արարքին՝ ճշմարիտ դատաստան, ճշմարիտ տրամախոհութիւն, այսինքն՝ այն դատողականութիւնը, որը միտքը հասցնում է ճշմարտութեանը: Տեսանք

¹⁵ Նոյն տեղում, էջ 252:

¹⁶ Տէս Շ. Պէրպէրեան, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, էջ 94:

¹⁷ Նոյն տեղում, էջ 94-95:

¹⁸ P. Декарт, Размышления о первой философии, в коих доказывается существование Бога и различие между человеческой душой и телом, Сочинения в двух томах, Т. 2, «Мысль», М. 1994, էջ 46:

¹⁹ Շ. Պէրպէրեան, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, էջ 95:

նաեւ, որ մտքի էական գործողութիւնը կապուած է ակնյայտութեան հետ, ճշմարտութեանը կարող ենք հասնել այն դէպքում, երբ իրագործուի այդ ակնյայտութիւնը:

Ճշմարտութեան միւս տեսակի՝ էաբանական ճշմարտութեան պարագայում, ճշմարտութեանը տալիս ենք իրերին եւ էականերին: Այստեղ ի նկատի ունենք, որ տուեալ իրը կամ էակը համապատասխանում է իր էութեանը, իր իսկութեան հաւատարիմ իրագործումն է: Մարդը ճշմարիտ մարդ է, եթէ իր մէջ մարդկային իսկութիւնն իրագործւած է: «Իսկութիւնը, որ էաբանական իմաստով ձեւն է, երբ որ իրագործուի նիւթեղէնի մը վրայ այդ նիւթեղէնը կը դառնայ ճշմարիտ իր մը: Երբ էակ մը կատարեալ գոյացումն է իր իսկութեան՝ ճշմարիտ էակ մըն է»²⁰: Էաբանական ճշմարտութիւնը եւս յարաբերութիւն է, սակայն ոչ թէ մտքի եւ առարկայի, այլ՝ առարկայի եւ այն առաջ բերող գաղափարի միջեւ: Այստեղ ճշմարտական արժէքը կայանում է այդ համապատասխանութեան առաւել կամ նուազ աստիճանի մէջ՝ որքան շատ է առարկան համապատասխանում իր գաղափարին, այնքան դրանում մեծ է ճշմարտական արժէքը:

Ամփոփելով եւ համադրելով երկու ճշմարտութիւնները՝ Պէրպէրեանն ի վերջոյ հասնում է ճշմարտութեան միասնական սահմանման, ըստ որի՝ ճշմարտութիւնը աշխարհում եւ իրերում առկայ իմանալին է, այն իրականութիւնն է, որը հասանելի է մտքին: «Ճշմարտութիւնը, կրնանք ըսել, բառին ամէնէն լայն իմաստով իմանալին է կամ իմաստը ներկայ թէ՛ աշխարհին եւ թէ՛ իրերուն մէջ եւ ներկայ՝ միտքին: ...Ճշմարտութիւնը առարկայօրէն իմանալիին տիեզերքի մէջ ներկայութիւնն է: Իբրեւ արժէք՝ միտքին յաջողութիւնն է այդ իմանալին բռնելու»²¹:

Գնահատելով ճշմարտութիւնը՝ արժէքաբանական տեսանկիւնից՝ հեղինակն առանձնայատուկ շեշտադրումով անդրադառնում է իմաստի հասկացութեանը: Ճշմարտութիւնն արժէք է, քանի որ մտքի յաջողութիւնն է իմաստին բարձրանալու հարցում: Այս կապակցութեամբ Դեկարտը գրում է. «Եթէ որեւէ մէկը պնդի, որ կենդանի արարածը շնչաւոր մարմինն է՝ առանց նախապէս պարզելու «մարմին» եւ «շնչաւոր» բառերի իմաստը..., ապա նա կարտաբերի բառեր, բայց մեծ հաշուով, ոչինչ չի ասի»²²: Մարդուն տրուած ընծայ՝ մտածելու կարողութիւնը, ինքն իր էութեան, գոյութեան, կեանքի ու շրջապատող աշխարհի խորունկ գաղտնիքները բացայայտելու անյազ ձգտումն ի վերջոյ իմաստին հասնելու նկրտումներ են: Նմանատիպ մօտեցում ունի նաեւ Ն. Ա. Պերտիաւելը, որի հայեացքներում ճշմարտութիւնը սահմանում է իբրեւ բարձրագոյն արդարութիւն²³: Ընդունելով ճշմարտութեան կարեւորութիւնը՝ հեղինակն այն դիտարկում է որպէս փրկութեան ուղի, իսկ ճշմարտութեանը հասնելու ձգտումը՝ կեանքի իմաստ²⁴: Տեսնում ենք, որ այստեղ, ինչպէս եւ Պէրպէրեանի վերլուծութիւններում, ճշմարտութիւնը դառնում է փիլիսոփայական յարատեւ հարցերից մէկի՝ կեանքի իմաստի բացայայտման պատասխանը:

Ըստ Պէրպէրեանի՝ ամէն արժէք հաճոյք, հրճուանք է պարունակում: Ճշմարտութիւնն իբրեւ արժէք հրճուանք է պատճառում, քանի որ միտքը ձգտում է դէպի իմանալին, եւ երբ գտնում է այն եւ որսում է նաեւ այդ իմանալիի իմաստը, այդ ձգտումը բաւարարւում, գոհանում է, ինչն էլ իր հերթին բերում է ուրախութեան: Հետեւաբար՝

²⁰ Նոյն տեղում, էջ 96:

²¹ Նոյն տեղում, էջ 99:

²² Р. Декарт, Рассуждения о методе начала философии страсти души, «Эксмо», М. 2019, էջ 333:

²³ Н. А. Бердяев, Самопознание, М., «Книга», 1991, էջ 391.

²⁴ Н. А. Бердяев, Судьба России. – М., «Философское общество СССР», 1990, էջ 84.

ճշմարտությունն ուրախություն է, եւ իբրեւ ուրախություն՝ արժէք է: «Անշուշտ ամէնէն առաջ մարդ կը մեկնի իր գործին յաջողութեան համար անհրաժեշտ ճանաչողութենէն: Բացի այդ գործնական միտքէն մարդ ունի նաեւ ճշմարտությունը՝ իմանալին իր զտութեան մէջ գտնելու բնազդը, ձգտումը: Աշխարհը որքան աւելի յայտնէ իրեն իր երեւոյթներէն իմանալի մը, այնքան աւելի աշխարհի իմանալիին գիւտը իրեն համար խոր եւ զուտ հոգեկան հրճուանք մը, յաջողություն մը կը կազմէ որ տեսակ մը արժէք է»²⁵:

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՊՀ Փիլիսոփայութեան ամպլոնի հայցորդ



²⁵ Շ. Պէրպլերեան, Արժեքաբանութիւն կամ արժէքներու իմաստասիրութիւն, Ամթիլիաս, 1976, էջ 100: